№ 161 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21 (ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3) 1878 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21 (ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3) № 161

ԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ ԻՎԱՆ ԴԱՎԻԴՈՎԻՉ ԼԱԶԱՐԵՎ հոգեկան ցաւակցութեամբ յայտնելով իր ամուսին Աննա Դավիդովնայի վախճանվելու մասին, խնդրում է ազգականներին և ծանօթներին շնորհ բերել յուղարկաւորութեան հանդիսին Զարափովի տանից, որ գտնվում է Միխայլովկի փողոցի վրա դէպի Վանքի Մայր-եկեղեցին սեպտեմբերի 21-ին, առաւօտեան ժամի 10-ին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դումայի ընտրութիւնները։—Ներքին տեսութիւն։ Նամակ Երևանից։ Նամակ Իգդիրից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Հայերը արևելքում։ Իշխան Բիսմարկի ճառը։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։—Բանասիրական։ Մանուկ Մուշեղին։

ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Թիֆլիսի քաղաքային Դումայի ձայնաւորների և նոր քաղաքագլխի ընտրութեան ժամանակը մօտենում է։

Մենք չենք կարող փոխել օրէնքի այս կամ այն կէտը, ուրեմն և չենք կարող խօսել այն բանի վրա թէ ինչի մեր հասարակութեան այս կամ այն ընդունակ և տաղանդաւոր անձը ձայնաւոր չէ ընտրվում։ Եթէ այս կամ այն օգտաւէտ անձն օրէնքով պատուիրած հարկաւոր ցէնզ չունի, ինչքան էլ ցանկանայինք որ նա ձայնաւոր ընտրվեր, նա այնու ամենայնիւ ընտրվել չէ կարող, մինչև որ հարկաւոր ցէնզ չը ստանայ։

Ուրեմն մեր քաղաքային Դումայի գալու ընտրութիւնների համար մեզ մնում է միայն ցանկանալ որ մեր ընտրողները ցէնզ ունեցողներից գլխաւորապէս իրանց քուէ տան նրանց, որոնք փոքր ցէնզ ունեն, որոնք ուրեմն աւելի մօտ են ամբոխին, աւելի ծանօթ են ժողովրդի կարիքների հետ։ Քաղաքային տնտեսութեան մէջ, մենք այդ միշտ ասել ենք, շատ անգամ նրանք, որոնք ամբոխին են պատկանում, որոնք մինչև անգամ տգէտ ու անգրագէտ են, աւելի օգտաւէտ են հանդիսանում, որովհետև աւելի հմուտ են ժողովրդի պահանջներին, աւելի սիրում են ժողովուրդը, աւելի լաւ են հասկանում նրա կարիքները, քան թէ հարուստները, քաղաքային մեծ ցէնզ ունեցողները։

Ու եթէ ընտրվածների մեծ մասը փոքր ցէնզ ունեցողներին կը պատկանէ և նոյն իսկ քաղաքագլուխը բնակիչների այդ շրջանից կընտրվի,—գուցէ մեր Դումայի մէջ աւելի քիչ ֆրազներ ու դարդակախօսութիւններ կը լսվեն և աւելի շատ գործ կը կատարվի քաղաքի տնտեսութեան և նրա բարեկարգութեան վերաբերութեամբ։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

14 սեպտեմբերի

Որքան յիշում եմ շատ ժամանակ է անցել այն օրից, երբ ես մի կողմ եմ թողել Երևանի դպրոցների վրա խօսելս։ Իմ նամակներիս մեծ մասը գրեթէ առօրեայ երևոյթների և հարցերի նկարագրութեանն եմ նուիրել. դպրոցական խնդիրը իմ թղթակցութեան մէջ ունեցել է չաստանչան տեղ։ Իմ այս կերպ վարվելուս պատճառը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ դպրոցների մասին ուրիշների այնքան յաճախ գրելը, որ ես ճշմարիտն ասած աւելորդ էի համարում այդ նիւթին դիմել։ Օգուտ քաղելով երկար ժամանակվայ լռութենից, մի քանի խօսք դէպի յիշեալ հարցը ես այսօր ինձ ներելի եմ կարծում։ Այս տարի թեմական դպրոցում մի դասատուն ևս աւելացաւ. այդ ապացոյց է որ դպրոցի ուսումնական մասը լայն ասպարէզ է ստանում։ Պէտք է խոստովանել, որ տեսուչ Բէգնազարեանի օրով դպրոցը մի զգալի զարկ ստացաւ։ Երևանցիք պէտք է աշխատեն ներկայ տեսչին պինդ ձեռքով բռնել։ Առհասարակ հայ դպրոցների անկարգ դրութեան մէջ մնալու ամենագլխաւոր պատճառներից մինը, տեսուչների և ուսուցիչների յաճախակի փոփոխութիւնն է՝ մէկը գնում է միւսն է գալիս, առաջինի չինածը երկրորդն է քանդում։ Արդարև մեր դպրոցները մեծ կարօտութիւն ունեն հմուտ տեսուչների. նախ քան մտածել դպրոցի այլ բարեկարգութիւնների վրա, պէտք է արժանաւոր տեսուչ որոնել։ Եթէ դպրոցը ունի իր տեսուչը, այդ բառի բուն մտքով, համարձակ կարելի է ասել որ նրա ապագան փրկված է։ Այստեղ իգական սեռի կրթութեան գործը նոյնպէս մխիթարական է։ Երկու օրիորդական դպրոց ունենք որոնցում սովորում են մօտ 120 աշակերտուհիներ։ Օրիորդ Տէր-Գրիգորեանը մեծ համակրութիւն է վայելում երևանցիների կողմից։ Ափսոս որ հայ իգական սեռի դպրոցները մեծ կարօտութիւն են զգում այդ տեսակ ուսուցիչների։ Վերջին անգամ «Մշակի» մէջ մի քանի խօսք էր տպված յարգելի օրիորդի մասին, որ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՆՈՒԿ ՄՈՒՇԵՂԻՆ

(Անցք)

I

Ձմեռվայ կարճ օրվան իրիկնապահն էր։ Ցիւնն եկել, սար ու ձոր ծածկել, ամբողջ երկիրը ծերացրել էր, սրա հետ և N քաղաքը։ Խիստ պարզկայ—ցուրտ էր լինելու այս գիշեր, որի նմանը շատ անգամ էր պատահում յիշած քաղաքի շրջակայքում։

Ձայները աստիճանօրէն կորվում էին. միայն անցորդների ոտների տակ դեռ լսվում էր նորեկ ձիւնի ճրռճրռոցը, որոնք պաշարով շտապում էին դէպի տուն։

Ճրագները վառվեցին, որոնց լոյսը տեղ-տեղ հազիւ երևում էր քրտնած պատուհաններից։

Երեխաները տաք սենեակում՝ մի քանիսը իրանց մօր գրկում, շատերը եռացող ինքնաեռի շուրջ պատած թէյ էին անուշ անում, իսկ միւսները արդէն ընթրիք ուտելու էին նստել, կամ կերել—վայելել, հանգիստ քուն մտել...

Սարսափելի ուժով ցուրտ քամին որոտմունք հանեց և դրան, պատուհանների ճեղքերից տուն մտնելով ամենքին զգուշացրեց, որ լաւ ծածկվեն, չը բացվեն, չը մրսեն...

Բայց անտանելի ցուրտը ինչ ոյժ ունի մեր հարուստների դէմ...

Վայն եկել, տարել էր չքաւորներին...

Քաղաքի մէջ՝ էլ մարդ չը կար բացօդեայ, բացի գիշերապահներից, որոնք հատ քուրքերի մէջ փաթաթված շրջում էին, որ ոչ ոք չը շփոթի աղա քաղաքացիների գիշերային բանաստեղծական հանգստութիւնը...

Նորից, բերանի մէջ թուք սառցնող քամին ամեն բան թմրեցրեց, սառցրեց...

Արդէն գիշեր էր։

II

Անծայր փողոցի կիսում, ուր պատերի պէս բարձրացած տների առջև տեղ-տեղ հազիւ թէ մշմեղ լոյս էին արձակում լապտերները, այս ժամում մի խեղճ մարդ ձեռքերը տրորելով, ցրտից կրծկված, կուչ եկած, կրծիկ դարձած, սրբթսրբթում էր...

Մերկ էր նա, շորերը պատառոտված,—կարմիր միսը երևում...

Նրա զգայուն, հրեշտակային, ծրռ-մրռվելու անընդունակ դէմքը աղետալի էր. աչքերը խոր ընկած, միրուքը, մազերը ձիւնի մէջ թաղված,—որ ախ էր քաշում, սիրտ էր մաշում...

Ո՞վ էր այդ խեղճը, ցրտի, օտարութեան դերին, թշուառութեան որդին...

«Օ՛խ, Աստած իմ... ուր պիտի խանգչիմ աս գիշեր... Եամն...» ասում էր նա և ձեռքերը տրորում...

Տրէխների միջից երևում էին ոտնամատներ, իսկ մէջքի վրա հազիւ երևում փալան...

—Այո՛, նա մեր խեղճ մշակներից մինն էր։

—Նա էլ շատերի պէս, քրդերի ձեռքով իր հօր հարուստ օջախից զրկված, եկել էր այստեղ բեռնակիր անասունի պաշտօն կատարէ, փող վաստակէ, որ տանէ Մուշ, իր որդիք պահէ..

Նրան կոչում են Մանուկ—խեղճ մարդ։

Երկիւղով, ցրտից կրծկրված, կարօտագին հայեացք էր ձգում նա իր հանդէպի տներին, որոնց մէջ դիւցազնական քնով խրոմփացնում էին «Հայոց մեծաց տիկնայք փափկասունք» և փրսփրսան հայկազունք վերջին դարի՝—աղաներն ու բէգերը...

Բայց ոչ ոք չը կար, որ Մանուկին խղճար, գոնէ գիշերելու օթևան տար...

Եւ նա շարունակեց մթան միջով փոխել իր անհաստատ քայլերը...

Եկաւ, հասաւ անպատուհան մի ցածլիկ տան, որի ապակաւոր դռնակը նայում էր փողոցին։ Տան մէջ բնակվում էր Թաթուկ Նանը.—մի ծերունի կին էր նա՝ երկիւղած, բարեպաշտ, առաքինի, աղքատասէր. բայց բոլոր քաղաքի չահախնդիր պարոնները, որոնք փող դաղելուց ու աչքակապութենից աւել ուրիշ առաքինութիւն չէին ճանաչում,—այդ կնոջ բնակարանը հասարակաց տուն էին ճանաչում, իսկ կնոջը՝ անզգամ....

Դրանց անքաւելի մեղքին թող մեր հայր սուրբերը թողութիւն տան, ապա թէ ոչ, քանի կայ Աստուած, դատապարտվելու են նրանք...

—Այո՛, այդպէս էր վարձատրվում մեր մէջ առաքինութիւնը...

Մանուկը շատ անգամ հիւր էր եղել այդ սրբազան կնոջ տանը, ուր այժմ էլ վառվում էր ճրագ։

Մանուկի անարատ դէմքի վրա երևեց յոյսի նշան։

«Թաթուկ-Նանի...» կրկնեց մի, երկու, երեք անգամ, բայց պատասխան չը կար։

Վերջապէս սիրտ առաւ, դուռը բաց արաւ և զարմացած յետ քաշվեց։

Սենեակում ոչ ոք չը կար։ Հիւրասէր կինը գնացել էր տատմերութեան և դուռը բաց թողել իր աղքատ հիւրերի համար։

Բայց Մանուկը չը համարձակվեց առանց իրաւունքի տուն մտնել. դուռը դրսից ամուր փակեց և խախտված սրտով նորից իր ճանապարհը շարունակեց...

Ցուրտը խստանում էր։

III

Երկրորդ փողոցի վրա, որ կցված էր նախորդ փողոցի հետ, գտնվում էր քաղաքի մէջ փառահեղ չինութիւնը։ Մի փոքրիկ խուցի մէջ, կպած այդ տան կողքին, որ փառաւոր էր, կպած էր տան պահապան քաւթառ Բանակ շունը։ Այո՛, պարոն Բանակ շունն էլ բաղդաւոր էր իր կառավարութեան մէջ, քան շատ աղքատներ...

Տունը պատկանում էր Պետրոս աղային, որ այս միջոցում հէնց նոր էր վերադարձել թղթախաղի բեմից, ուր նա զոհում էր իր հայրական միլիոնները...

Փողոցի մէջ երևաց սոսկալի քայլերով մի ծանօթ անձն։—Նա այս ու այն կողմ էր նայում, կարծես մի տեղ փնտռելով։

«Ասծոյ սիրոյն... օխ...» շարունակում էր վիզը ծռած աղերսել։

«Չենի թորգի իսի տեղս խանքչեմ...» ասաց նա և մօտեցաւ։

Ցանկարծ խաւարի միջից վրա յարձակվեց մի շուն... պ. Բանակի հաչոցը սարսափելի որոտմունք հանեց լռված փողոցում...

«Վա՛յ իմ արևուս ... եամն ... քըզի ղուրբան...» ասաց սրտապատառ ծանօթ ձայնը։

Տան վերնայարկի սենեակներից մինի դուռը բացվեց և պատշգամբից խալաթով մի պարոն քարշ ընկած հարց արեց.

«Кто такой?...»

Շունը քիչ էր մնում չղթան կտրի...

«Кто тамъ?...»

—Աղա, քըզի ղուրբան...

«Ո՞վ ես...» մերժող և կոշտ ձայնով կրկնեց մեր ազգասէրը։

—Քըզի ծառայ Մանուկ...

«Ի՞նչ է, ինչ կայ, ինչ կուզես...»

—Սաղութենդ։

«Իմ սաղութիւնը ինձ է պէտք...»

Այս վայրենի սրախօսութիւնը մի գազանական ծիծաղ զարթեցրեց սենեակի մէջ։

Տիկինը, որ նոր էր ազատվել իր գիժ կեսրայրի ձեռքից, աքաղաղի պէս այնկերպ սկսեց կըրկըչալ, որ քիչ էր մնում սիրտը պատռի...

—Թէ խայոց խաւատ կը սիրէք, տեղմ չնորիք աս գիշեր խանչիմ... շարունակում էր աղեսալի ձայնը ներքևից, որպէս իր Աստուծու դէմ, դէպ վերև...

«Вонъ! Вонъ!.. Կորի—գնա, թշուառական...» պատասխանեց մեր աղան—նա, որ երբեմն չէր խնայում հազարներ մսխել դարաչիների, գըրբացների, տիրացուների և նոյն իսկ իր տանու ուսուցիչների քեֆի համար և որ պատրաստ էր մի գիշեր, հարանիքի մէջ հազարների հրափամփուշտ (շուշխունա) վառել եթէ միայն դրանով պէտք է չահէր իր նմանների սիրտը...

Բայց մեր պնդերես Մանուկը դարձեալ շարունակում էր իր աղերսանքը։

«Էյ!—ասաց նա ծառային—գնա պատասխան տուր այն անպիտանին...»

Սանդուղքի վրա լսվեց ոտնաձայն.

Մանուկը, լեղաճաք, չտապեց հեռանալ...

պէս թէ կօնդցիք բամբասում են նրան։ Ցեսուչ Բէգնազարեանն էլ բացատրութիւն պահանջեց բամբասանք բառի համար։ Խնդիրը չատ պարզ է. մենք այստեղ բամբասանք բառը հասկանում ենք մի քանի հնամոլ և տգէտ կանանց կարծիքները, այնպիսի կանանց, որոնց աչքում մի փոքր խորթ է թւում մի օրիորդի միայն շրջելը, ուսուցչական ժողովների մէջ ազատ վիճաբանութիւններ անելը, այլապէս չէին կարող դատել մեր քիթը փաթթած պառաւները կամ այն կանայքը, որոնք մի մարդու փողոցում տեսնելիս, երեսը պատի կողմ դարձնելը դեռ ևս քաղաքավարութիւն են կարծում։ Պէտք է յիշել որ այդպիսի կանանց թիւը փառք Աստուծու հետզհետէ պակասում է, և իմ կարծիքով մասնաւոր երևոյթի վրա, ընդհանուր կէտից չը պէտք է նայել։ Ես չեմ դուրս գալիս հանդէս, որպէս բացատրութիւն տուող պ. Բէգնազարեանի խմբագրին ուղղած նամակի դէմ, այլ իբրև «Մշակի» մշտական թղթակից հարկաւոր համարեցի այդ հարցի մասին մի քանի խօսք գրել, մանաւանդ որ օրիորդը վայելում է տեղական հասարակութեան յարգանքը, իսկ նամակագիրը երևի իր նպատակները ունէր։—Մեր թատրոնական բեմը բոլորովին պատրաստ է։ Մենք այժմ ունենք մի չքեղ թատրոն, որը չունեն հարուստ Թիֆլիսցի հայերը։ Սեպտեմբերի 25-ին առաջին ներկայացումն է։ Պողոս-Պետրոս եկեղեցու գաւիթը մի նուիրական վայր է. այդտեղ է եկեղեցին, դպրոցը և թատրոնը, այն երեք պաշտելի հիմնարկութիւնները, որոնք առաջնորդելու են մեզ դէպի լոյս և փրկութիւն։

Ա. Եր.

ՆԱՄԱԿ ԻԳԴԻՐԻՑ

—

8 սեպտեմբերի

Իմ նախկին նամակով խոստացել էի ալաշկերտցիների գաղթականութեան մասին մի տեղեկութիւն հաղորդել։ Ահա կատարում եմ այդ խոստումը։ Արդէն նոյն նամակից ընթերցողները գիտեն, որ ալաշկերտցի հայերի մեծամասնութիւնը, թողնելով իր հայրենիքը, անցաւ Երևանի նահանգը Ղարսի կողմերը գաղթելու դիտաւորութեամբ։ Այս գաղթականութիւնը, թէև համեմատաբար անցեալ ժամանակների գաղթականութեանց հետ մի աննշան թիւ է կազմում, բայց և այնպէս զգալի հարուած տուեց Բագրեւանդի գաւառին, պատճառ, որ այժմ այդ երկրում մնացած փոքրաթիւ հայերը ցրված լինելով կիսաւէր գիւղերում և բոլորովին անզօր լինելով ինքնապաշտպանութեան համար, ահի և դողի մէջ են մնացել։ Չը գիտեմ, մի կողմ թողնելով Կ. Պօլսի ազգային պատրիարգարանը, ինչու Թիւրքաց կառավարութիւնը չէ հոգում օր առաջ իր ներկայացուցիչը, իր իշխանութիւնը մտցնել ռուսաց զօրքերից թողած երկրներում, ազատել քուրդերի կատաղի յարձակումներից, կոտորածներից և կրկնակի յափշտակութիւնից հայերին, այդ իր աշխատասէր և ամենահաւատարիմ հպատակ ժողովրդի թշուառ մնացորդներին։ Այո, զարմանալի է մի այդպիսի երևոյթ, մի այդպիսի տարօրինակ սառն անտարբերութիւն, որ թիւրքաց պետութիւնն ունի դէպի իր այդ ամենահաւատարիմ, բայց արդարև թշուառ հպատակ ազգը... Բայց մենք դառնանք մեր նպատակին։

Պ. պ. ընթերցողներին նոյնպէս յայտնի է, որ Կ. Պօլսի հայոց ազգ. պատրիարգարանի գործակալ հ. Վահան վարդապետը հասաւ Բայազէթ այն ժամանակ, երբ գաղթականները, այրելով իրանց տները, խոտի և ցորենի դէզերը և մինչև անգամ չը հնձած արտերը անցել էին Ալաշկերտի շրջանի սահմանագիծը։ Վարդապետի և Երևանի զօրաբանակի ճիգը վերադարձնել հայերը իրանց տեղերը անկարելի եղաւ։ Դարձեալ կրկնում եմ՝ եթէ հայր Վահանը երեք օր առաջ եկած լինէր, մի հայ անգամ չէր գաղթի։ Բայց թէ ինչի այդպէս ուշ եկաւ, ահա լսեցէք պատճառը։ Հայր Վահանը պատուէր էր ստացել շրջել Տաճկա-Հայաստանի գաւառները զանազան տեղեկութիւններ ժողովելու և ծանօթացնելու հայ ազգը պատրիարգարանի գործունէութեան հետ ազգային ապագայի մասին այն ժամանակ, երբ դեռ ևս Բերլինի դեսպանաժողովի նիստերը չէին կայացել, ուրեմն այն ժամանակ, երբ Սան-Ստէֆանոյի դաշնադրութիւնը քննութեան չէր ենթարկվել և հետևաբար Բայազէթը և Ալաշկերտի հովիտը չէին վերադարձրած Տաճկաստանին, ուստի և պատուելի հայրը հրահանգ չունէր այդ գաւառը, իբրև Ռուսաստանին միացրած, այցելել. սակայն Թիֆլիս հասնելուն պէս, որտեղից ուղղակի գնալու էր Կ. Պօլիս, լսելով որ այս երկիրը կրկին վերադարձած է Տաճկաստանին և այդ գաւառին սպառնում է գաղթականութեան վտանգը, աճապարում է այս հեղեղի առաջն առնելու դիտմամբ գնալ Բայազէթ, բայց տարաբաղդաբար Էջմիածին հասած ժամանակ, պարտաւորված լինելով ներկայանալ Վեհափառ Կաթուղիկոսին, ստիպված է լինում ութ օր և աւելի սպասել մինչև Նորին Օծութիւնը կը բարեհաճի ընդունել և արձակել նրան.... Այն ինչ մեր զօրաբանակին հրամայած էր օգոստոսի 25-ին, այն է Բաթումը ստանալու օրից յատկապէս, մինչև սեպտեմբերի մէկը թողնել տաճկական սահմանը և անցնել Իգդիր։ Այս կարգադրութիւնը լաւապէս յայտնի էր Էջմիածնի իշխանութեանը, յայտնի էր նրան և հայերի զօրաբանակի հետ գաղթելու դիտաւորութիւնը... Էջմիածինը փոխանակ իր եպիսկոպոսներից մէկը *) ուղարկել գաղթականութեան առաջն առնելու, այդ ազգակործան շարժումն դադարացնելու, արգելում է պատրիարքարանի վարդապետին մի քանի օր այնտեղ բոլորովին ի զուր և անշահ սպասել տալով հակառակ վարդապետի կամքին, կարծես գիտակցաբար, ո՞ գիտէ, գուցէ և.... թէև այդ վարդապետից և առաջ այդ հեղեղի առաջն առնելու աշխատողներ կային, բայց և կային անձինք, որոնք համարձակվում էին իրանց ազգասէր կոչել և խորհուրդ տալ հային փախչել իր հայրենիքից։ Այդ մարդկանց թւում էին մեր դուքանչի և դասաբ (մսավաճառ) և մի քանի տխմար մանր ծառայող ազաները, նկարագրելով Տաճկաստանցի հայերի ապագան աւելի սև ու մութ ներկերով։ Այդ ողորմելիքը մատնիչ և դաւաճան էին հրատարակում նրանց, որոնք փորձ էին փորձում համոզել ժողովրդին հանդարտ իր տեղը նստելով ինքնապաշտպանութեան միջոցների դիմել։ Նամակս երկարացաւ և ահա վերջացնելով խոստանում եմ մի քանի հետաքրքիր տեղեկութիւններ ևս հաղորդել մի ուրիշ անգամ։

Մ. Տէր-Պետրոսեանց

*) Այդ մասին ևս բաւական հաստատ աղբիւրից գիտեմ խնդրած է եղել Կ. Պօլսի Ս. Պատրիարքը։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ գրում են ԵՐԵՒԱՆԻՑ, որ Պարսկաստանի սահմանի գծի վրա քրդերը սեծ խումբերով անցնում են Արաքսը և յափշտակութիւններ են անում։ Քանի օր առաջ Սաղարակի դաշտերից քշեցին ոչխարների մի քանի հօտեր, որոնց մի մասը կարողացան ազատել տեղային թուրքերը. վերջիններից մի մարդ սպանվեցաւ կռւի մէջ։

—

Մեզ գրում են ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ, որ տեղային երկսեռ դպրոցների հոգաբարձութեան եռանդուն աշխատութեամբ, այս տարի արական դպրոցում բացվեցաւ երրորդ դասատուն. դպրոցը այսուհետև երկու պատրաստականներով կունենայ հինգ դասատուն։ Նոյն տեղից հաղորդում են, որ ներկայ ամսի 8-ի գիշերը մի սարսափելի հեղեղ չատ վնասներ տուեց գիւղին։ Ագուլիսի ծերերը վախենում են, թէ ջրհեղեղը նորից պիտի կրկնվի մ օ դ ն ի կնիկների մեղքի պատճառով....

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ գրում են, թէ այս տարի դիտաւորութիւն կայ ճեմարանի ուսուցիչներին վարդապետներից նշանակել, չը նայելով որ նրանք հրաժարվում են ասելով «մեր գործը չէ»։ Աստուած ազատէ, ինչ գաւազանաշարժութիւն կը լինի, երբ այդ բոլոր սնագլուխները մի տեղ կը հաւաքվեն։

—

Օրերումս մտան մեր խմբագրատունը մի քանի գանձակեցիք և գանգատվեցին թեմական տեսուչ պ. Յ. Տէր-Յովհաննիսեանից։ Պարոն տեսուչը ուղարկել է Գանձակի երկու դասատուներից (պատրաստական և առաջին) բաղկացած օրիորդաց ուսումնարանի համար վարժուհի օր. Խուբեանին։ Երկու շաբաթից յետոյ նոյն պաշտօնը վարելու համար հանում է Գանձակ թեմական տեսչի քոյրը, որին գանձակեցիք իրանց ուսումնարանի համար անյարմար են համարում։ Մեզ զարմացնում է տեսչի այսպիսի կարգադրութիւնը։ Մի՞թէ Գանձակի փոքրիկ օրիորդաց ուսումնարանի համար հարկաւոր են երկու վարժուհիներ։ Մի՞թէ Գանձակի ուսումնարանը կարող է տալ մօտ 1000 բուբլ ռոճիկ միայն վար-

---

«Երթամ բաղնիքներու տաք ջրին քով պառկիմ» մտածեց նա և կանգնեց. ինչ-ինչ պատճառներ արգելք եղան գուցէ, և նա չարունակեց դէպի փողոցի ծայրը, որ վերջանում էր մի ահագին դատարկ տարածութեան մէջ...

IV

Լայնադիր հրապարակի մի անկիւնում, տախտակաշէն տան տակ, բաւականին խոտ կար դիզված, որի մօտ մինչև անգամ անթեղած մնում էր կրակ, որ կէսօրին վառել էին մսավաճառները։

Ամեն տեղ տիրում էր կէս գիշեր։

Փողոցի ծայրում կանգնած էր Մանուկը, որ ընազդումից կարծես զրդված չտապեց դէպի խոտի դէզը։

«Իսի տեղէն ալ չը քշեն զիս...» ասաց նա մօտենալով։

Եւ փոքր ինչ քանդելով դէզը մտաւ նրա մէջ։ Նրա միայն գլուխն էր երևում։

Ցրտից թմրած նա տաքացաւ և իրան զգաց աւելի հանդիստ, քան նոյն իսկ մեր (այժմ հանդուցեալ) պ. ազգասէր Համբարձում աղան, որ այս գիշեր 5000 բուբլ պարգևելով թղթախաղին էլ քուն չէր գալիս այրված սրտին....

Մանուկը մեծ զոհութեամբ երեսին խաչ հանեց, իր «Խար մեր երկինք» ասեց։

«Գոհանամ քեզմէ, Արարիչ.» մրմնջում էր նա առանց բողոքելու Ահեղին իր նմանների չարագործութիւնների վրա, առանց իր վիճակը համեմատելու իր հանդէպի անների ննջողների վիճակի հետ և վերջապէս առանց մի փոքր տրտունջի, որ, որպէս մարդ, իրաւունք ունէր տրտնջալու...

Ի՞նչ եմ ասում.

Նա, որ անընդունակ էր մարդկերանց վատթարութիւնը պախարակելու մէջ, դեռ միտքն անգամ բերեց մրմնջալ իր պապական երդը.

Նա քաղցր եղանակով երգում էր.

«Կօդ ու կէս կորէկ ունիմ՝ ցանելու խամար,
«Ճընճղկըներ ժողվան-իկան՝ ուդիելու խամար,
«Թռչունիր յեղ փախուցիմ՝ պախիելու խամար,
«Պախեցիմ, արդ խասուցիմ՝ ճրժերու խամար,
«Ճրժերըն ուդեն, մեծնան՝ խայ ազգի խամար,
«Խայու ազգ զինուոր կուզէ՝ փրկվիելու խամար,
«Քրդերէն, տաճկըներ՝ պրծնիելու խամար...»

Եւ մեծ եռանդով չը ձանձրացաւ անդամ իր երգի, ձայնը փոխվող, այս յորդորակն էլ վերջացնելու։

«Աւաղ գլխուս. վայ արևուս... խլաւ կորէկ, խատաւ կորէկ...
«Ճրժեր մնան անտիրական... Տուն կումարէ խղճուկ հայի...
«Պատառըմ խաց չը կայ ասված... Ջէն, սուր ու թուր
«Պէտք են, բայց ուր, ինչով երթանք մեր տուն ու կեանք,
«Մեր խար ու մար՝ փրկելու խամար....»

Լռեց նա և խաղաղութեան հրեշտակը գրկեց նորան իր անարատ թեևերի մէջ։

Լռեց և ընութիւն։

V

Իւրաքանչիւր տարի ահագին թիւ այսպիսի կորիճ, ամրակազմ մշակները ցրվում են դէպի աշխարհի զանազան կողմեր։ Կովկասի, Ռուսաստանի, Տաճկաստանի—մի խօսքով—Ասիայի ու Եւրոպայի համարեա բոլոր քաղաքներում 100-ով, 500-ով ցրված են նրանք, ուր բիւրաւոր վտանգների մէջ կամ կեանքից են զրկվում, կամ կենսազուրկ 5—10 տարի վաստակած, քիթվալացած, ձեռքից-ոտքից ընկած վերադառնում են հայրենիք անպէտք դիակի նման... Եւ ոչ ոք կայ՝ նրանց խղճայ։

—Շատախօս ազգասէրներից ոչոքի սիրտ չէ ցաւում այս ազգակործան իրողութեան վրա...

—100, 300 տարի այդ վարակող ցաւի նման գաղթական կեանքում դեռ մի հարուստ հայ չէ գտնվել, որ այդ կենդանի-մեռնողների առաջն առնի մի, երկու գործարան հիմնելով այն երկրում, որից ոչինչ արդիւնք չը ստանալով փախչում է խեղճ մշակը...

Թողած այս.

—Դեռ հայ բարոյական եկեղեցին չէ ծնել—ստեղծել հարիւրաւոր դարերում մի հայ ընդունակ այդպիսի զոհաբերութիւններին,—մի հայ, որ գոնէ մշակների կացարան չինէր, ուր այդ թշուառութեան որդիները օրական 1—2—3 կոպէկ վճարելով յարմար օթելու տեղ ունենային։

Բայց ինչ...

—Հայերի սրտերը դէպի «ազգայնական-կրօնական-մարդասիրական» զգացմունքը (ի հարկէ փառք այս կողմից մեր բարոյագէտ հոգևոր հայր սուրբերին) այնպէս է սառել ու թմրել, որպէս բնութիւնը այս գիշեր։

Աքաղաղները սրտապատառ խօսում էին ամեն տեղ. արդէն լուսանում էր։

Արթնացել էր և քամին, որ խիստ ուժով ծառեր անդամ պոկում էր։

Հրապարակի վրա սարսափելի աղաղակ էր տիրել...

Բայց ձմեռվայ հրդեհը է ամենավեհը։

Այնտեղ դիզվել էին չատերը. խոտը կրակ էր ընկել և տախտակաշէն տունն անդամ կրակի մէջ կորել... Ամենքն էլ աշխատում էին հրդեհը հանգցնել։

«Տօ, էստեղ նայէք. էս ո՞վ է էստեղ սուտ քնուկի տվել...» ասում էր մինը։

«Այ դու, սատանայ մշակ. խոտը կրակ ես դցել ու սուտամեռնուկի արՔ...»

«Ի՞նչ հարամզադէն է... Բռնեցէք, բռնեցէք...» հրամայեցին չատերը։ Եւ մի քանի անգութ ձեռներ ուղղվեցին դէպի խոտի այն մասը, որ քամու թափած ձիւնի պատճառով դժուար էր վառվում։

Հագուստը կրակ ընկած քնաթաթախ խեղճ մշակը կարծես մի թանկագին կորուստ էր որոնում.

«Կեցէք, ախպար, փալանս... փալանս» ասում էր նա և կամ ընդդիմանում ձգողներին և կամ հանգցնում չորերը։

—200 մանէթի խոտս կրակ է դցել՝ բաւական չէ, փալանն էլ է փնտռում... Արի, արի, տեսնենք ո՞նց պէտք է պրծնես իմ ձեռքից... է...» Եւ նա բռնեց խեղճ մշակին։

«Բլէթս... Բլէթս... Թորգէք, եաման բլէթս խլսուկ ա... Օ՛խ, իմ Աստված...»

—Հիմի էլ ինչ մօգոնեց... Այ դու փախստական...

Եւ անգութ բռունցքներ թափեցին խեղճ մշակի գլխին մինչև եկաւ ոստիկաններից մինը։

«Ո՞վ ես դու, անունդ ինչ է.» հարց արեց ոստիկանը։

—Մանուկ, քրզի ծառայ, Մշու երկրէն. Մշու սուլթան զբ՞ արև պախայ, ասում էր լալով խեղճ մշակը... Աս գիշեր տուն չը թորգին ոչըմ տեղ, իսի խոտին մէջ պառկայ... Խինգ մանէթի փարաս փալանիս խետ այրուկ ա...

«Է՛, մշակ աղա, էդ լաւ չտուկ ա, որ սուտ սարքել ես, միայն քու բանն էլ խիստ փթուկ ա...» ասաց ոստիկանը և բազմութեան հետ ուղևորեց իր կալանաւորին դէպի պօլիցիա չարունակելով «ամեն մարդ կարող ա բլեթ չունենալ և խոտը կրակ քցիլ ու «բլէթ այրուկ ա» ասիլ...

—«Եաման... բլէթս, փալանս...» աղերսում էր աչքերից կրակ թափելով խեղճը և ակամայ կամքով հնազանդում ոստիկանին։

Բազմութեան ետևից մինը մազերը արձակած, մայրական գթութեամբ, հեծալով աշխատում էր հասնել կալանաւորածին...

«Մի... Մի տանէք... Դա անմեղ է...» ասում էր նա, որպէս երբեմն ամենօրհնեալ տիրամայրը։

Նա մեր Թաթուկ Նանին էր։

VI

Այս անցքից մի չաբաթ յետոյ խոտատիրոջ տանը, բազմութեան վճռով, չորս տարվայ անվարձ ծառայութեան էր ստիպված մեր խեղճ մշակը—Մանուկ Մուշեցին...

Դր. Պապեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ գրում են ԵՐԵՒԱՆԻՑ, որ Պարսկաստանի սահմանի գծի վրա քրդերը սեծ խումբերով անցնում են Արաքսը և յափշտակութիւններ են անում։ Քանի օր առաջ Սաղարակի դաշտերից քշեցին ոչխարների մի քանի հօտեր, որոնց մի մասը կարողացան ազատել տեղային թուրքերը. վերջիններից մի մարդ սպանվեցաւ կռւի մէջ։

—

Մեզ գրում են ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ, որ տեղային երկսեռ դպրոցների հոգաբարձութեան եռանդուն աշխատութեամբ, այս տարի արական դպրոցում բացվեցաւ երրորդ դասատուն. դպրոցը այսուհետև երկու պատրաստականներով կունենայ հինգ դասատուն։ Նոյն տեղից հաղորդում են, որ ներկայ ամսի 8-ի գիշերը մի սարսափելի հեղեղ չատ վնասներ տուեց գիւղին։ Ագուլիսի ծերերը վախենում են, թէ ջրհեղեղը նորից պիտի կրկնվի մ օ դ ն ի կնիկների մեղքի պատճառով....

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ գրում են, թէ այս տարի դիտաւորութիւն կայ ճեմարանի ուսուցիչներին վարդապետներից նշանակել, չը նայելով որ նրանք հրաժարվում են ասելով «մեր գործը չէ»։ Աստուած ազատէ, ինչ գաւազանաշարժութիւն կը լինի, երբ այդ բոլոր սնագլուխները մի տեղ կը հաւաքվեն։

—

Օրերումս մտան մեր խմբագրատունը մի քանի գանձակեցիք և գանգատվեցին թեմական տեսուչ պ. Յ. Տէր-Յովհաննիսեանից։ Պարոն տեսուչը ուղարկել է Գանձակի երկու դասատուներից (պատրաստական և առաջին) բաղկացած օրիորդաց ուսումնարանի համար վարժուհի օր. Խուբեանին։ Երկու շաբաթից յետոյ նոյն պաշտօնը վարելու համար հանում է Գանձակ թեմական տեսչի քոյրը, որին գանձակեցիք իրանց ուսումնարանի համար անյարմար են համարում։ Մեզ զարմացնում է տեսչի այսպիսի կարգադրութիւնը։ Մի՞թէ Գանձակի փոքրիկ օրիորդաց ուսումնարանի համար հարկաւոր են երկու վարժուհիներ։ Մի՞թէ Գանձակի ուսումնարանը կարող է տալ մօտ 1000 բուբլ ռոճիկ միայն վար-

ժուհիներին։ Ասում են, որ օր. Խուրեանը սովորել է առաջ Գայեանեան ուսումնարանում, յետոյ արքունի իգական գիմնազիայում։ Ցանկալի կը լինէր, որ պ. Թեմական տեսուչը մեկնէր, որտեղ է սովորել իր քոյրը և ինչ մանկավարժական չարժառիթներից դրդված նա Գանձակ երկու վարժուհիներ է ուղարկել։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՑԵՐԸ ԱՐԵՒԵԼՔՈՒՄ *)

Տէր, արդեօք սա ոգևորութեան երաշ է թէ լուրջ իրողութիւն է, որ քնած Ասիայի վրա մի նոր դարագլուխ է ծագում և որ Անգլիայի ձեռքն է դրված ապագայի ջահը, որ այս խաւար երկիրները և նրա վայրենի ժողովրդները լուսաւորէ։ Եթէ ըստ երևոյթին Մոսկովեան գերիշխանութեան կոչումն է հիւսիսային Ասիա նուաճելը, թող ուրեմն մեր հայրենիքի պաշտօնն ևս լինի հարաւը քաղաքակրթելու պաշտօնը ստանձնել։ Անտարակոյս, այս երկու տէրութիւններից իւրաքանչիւրը կարող է օգտակար կերպով գործել բուն իրան շրջանի և սահմանների մէջ, իւրաքանչիւրը կարող է աշխատել մի և նոյն բարի նպատակին հասնելու իր սեփական անկախ գործունէութեամբ։ Ոչինչ չասելով հիւսիսային կոլօսի մասին, բրիտանական տէրութիւնն էլ թէև խիստ հսկայական՝ բայց դարձեալ Բրիարէոս չէ, այլ կարօտ է ուրիշների օգնող ձեռքերին և գլուխներին։ Արդ, մեր խնդիրը լուծելու համար, որոնք են այն գործակատարները և որոնք են այն գործիքները, որ մենք պէտք է ընտրենք։ Ասիայում մի ժողովուրդ կայ, որ հին ժամանակները օգնեց բրիտանացիներին Հնդկաստանը գրաւելու. այս ցեղը տոկուն է այնչափ, որչափ որ մեր ցեղը, սակայն ունի նաև համբերութեան և առաձգականութեան մասնաւոր յատկութիւններ։ Անցեալում նոքա այնպիսի գործակատարներ տուին, որ կարողացան խոր երկիրները թափանցել և աւելի շահաւէտ կերպով առևտուր անել, քան թէ Եւրօպայի ազգերը և այժմ ևս, ինչպէս հին ժամանակներում, պէտք է նոքա ընտրվեն Եւրօպայի կամքը Ասիային հասկացնելու և գործադրելու։ Նկատված է իբրև հայ ազգի մի առանձին յատկանիշը, որ հին ժամանակներից ի վեր, երբ նրանք լուսաւորեալ Եւրօպային հանդիպեցան, մեծ թախանձանքով որոնեցին և ծծեցին արևմտեան գաղափարները, ջանք արին գործադրել արևմուտքի գիտերը և քաջութեամբ առաջ խաղացին առաջադիմութեան ասպարիզի մէջ։ Մի այս տեսակ միջոց՝ ուրիշ ոչ մի տեղ չի գտնվի։ Նոքա են այն մի հատիկ միացնող օղակը և այն մի հատիկ միջոցը, որ կարող է արևելք և արևմուտք շաղկապել, բայց մինչդեռ նոքա իբրև արևելցիք կարող են լաւագոյն կերպով հասկանալ և գործադրել Ասիայի միւս ազգերի հետ ամենամտերիմ յարաբերութիւնը. նոքա յայտնի են նաև իրանց որոշ ազգութեամբ։

Ոչ մի ազգ նրանցից աւելի պինդ չէ բռնել իր կեանքը և ազգային աւանդութիւնները։ Մեծ հաստատամտութեամբ պաշտպանեցին իրանց իրաւունքները այն փորձերի դէմ, որոնցով կամենում էին հայոց եկեղեցու ընտրողական իրաւունքը ոտնակոխ անել։ Նոցա անցեալ և արդիւնաւոր պատերազմները ապացուցանում են որ նոքա չեն կարող բռնակալութեան ձեռքում մի դիւրաթեք գործիք դառնալ, սակայն ազատութեան ձեռքում մի զօրաւոր գործիք կը դառնան։ Նոցա՝ իրանց այժմեան դրացի մահմեդականների և իրանց հալածող քուրդերի հետ ունեցած արիւնակցութիւնը նրանց ընդունակ է շինում, իրանց շրջապատողներին քաշել քաղաքակրթութեան ճանապարհի մէջ, այնպէս որ եթէ այդ վայրենի հրոսակները օրէնքի ոյժով ստիպվեն արգելվելու, այսինքն կամ իրանց ժայռերի վրա սովամահ լինելու և կամ խաղաղութիւնը ընդունելու, այն ժամանակ նոքա կը հարկադրվեն դաշտերը վայր իջնելու, ոչ թէ ապատակելու, այլ մշակելու համար. և ով կարող է նախատեսել բոլոր այն արդիւնքը, որ կարտադրէ ապահոված քաղաքական և կրօնական ազատութիւնը։

Դիտել հարկաւոր է, որ հայերը պահանջում են ոչ թէ իշխանութիւն, այլ խաղաղութիւն. կարելի է նոքա որոնել են իշխանութիւն. նոցա ցեղին մի օտար բան չէ իշխանութիւն վարելը, եթէ պատմութիւնը ճիշդ տեղեկութիւն է տալիս, որ Հայաստանը ոչ թէ միայն իր նախարարներն ու թագաւորներն է ունեցել, այլ որ աւելի է քան զայս՝ տուել է նաև Բիւզանդիայի կայսրութեան նրա ամենալաւ և ամենահմաստուն գահակալները և յաղթութեամբ փառաւորված զօրավարները։ Հայաստանի որդի է Իսահակ Եկզարքը, դրուատեալ Ռավենայում երախտագէտ յոյն բանաստեղծութեամբ։ Հայաստանից դուրս եկան Մաւրիկիոս, Լևոն և Վասիլ, Յովհան Զմիշկ։ Նոքա հիմա յիշում են, որ ունեցել են սեփական իշխանութիւն, բայց չեն ակնկալում. նոքա փափագում են ուրիշների ձեռքով ճաշակել իշխանութեան բարիքը՝ բարեաց իշխանութիւն. նոքա բաղձում են խաղաղութիւն, որ է ոսկեղէն օրերի օրհնեալ կարապետը։ Արդեօք ծագում է այդ նոր առաւօտը։

ԻՇԽԱՆ ԲԻՍՄԱՐԿԻ ՃԱՌԸ

Գերմանական պարլամենտի սեպտեմբերի 17-ի նստին իշխան Բիսմարկ ասաց հետեւեալ ճառը։

«Ողորմած պարոններ, երկու ամիս պաշտօնական աշխատանքներից ազատ լինելուց յետոյ, ես չունէի և այժմ էլ չունեմ դիտաւորութիւն մասնակցել վիճաբանութիւններին օրէնքի առաջին ընթերցանութեան ժամանակ, այլ կամենում եմ ինձ պաշտպանել երկար լռութենից յետոյ։ Թէպէտ ես վճռում եմ խօսել, բայց ոչ նրա համար, որ կանգնեմ հռետորական հողի վրա, ինչպէս նախկին հռետորը։ Բարձրացրած հարցերը կոչնչանան, երբ մենք կսկսենք քննել օրէնքի գործնական մանրամասները մասնաժողովի միջոցով և երկրորդ ընթերցանութեան ժամանակ։ Ինձ դրդում է խօսել այն հանգամանքը, որ անդամ Բէբէլը Բիսմարկի նման պատմեց իմ մասին մի առասպել, որ եթէ իմ կողմից չը հերքվի, վերջ ի վերջոյ կարող է մի պատմութիւն դառնալ, լրագիրներից և ուրիշ կերպ իմ մասին տարածված լուրերի նման, որոնք կամաց կամաց երևոյթական ճշմարտութեան ձև են ստանում։ Անդամ Բիսմարկ այսպէս անուանված Հեռգելի նախագծի մասին խօսելու ժամանակ, ակնարկել է իմ բացակայութեան ժամանակ, որ ես յարաբերութիւններ եմ պահպանել սոցիալ-դեմոկրատիայի հետ, որոնք ինձ վրա էլ պատասխանատուութեան մի բաժին են դնում այդ շարժման զարգանալու համար։ Գոնէ պատուելի անդամը կամենում էր ժողովի և հասարակութեան վրա այդպիսի տպաւորութիւն գործել։ Երբ այդ բանը ես կարդացի իմ գիւղական միայնութեան մէջ, ինձ մի փոքր զարմացրեց այն հանգամանքը, որ անդամ Բիսմարկ արտաքուստ է քննում սոցիալ-դեմոկրատիա բառը և չէ կամենում զանազանել մշակների դրութիւնը բարւոքելու համար ազնիւ ձգտումները, որ մեր ամենքի սրտին մօտ է նրանից, ինչ որ մենք այժմ տարաբաղդաբար պէտք է հասկանանք «սոցիալ-դեմոկրատիա» բառից։ Եթէ անդամ Բիսմարկ կամենում է դուրս թափել ջուրը աւազանից երեխայի հետ միասին և դրդել, որ մենք աշխատելով ստանձնարել արքայասպանութեանը հասնող աղանդը մի և նոյն ժամանակ ընդդիմանանք բանւորների վիճակի բարւոքման համար արած աշխատանքներին, մենք նրա հետ չենք գնայ ձեռք ձեռքի տուած և կաշխատենք իրագործել մեր ձգտումները, երբ մեր պաշտօնը կը ներէ մեզ։ Այդ բանը ես ինձ համար պատիւ կը համարեմ։ Անդամ Բիսմարկ հաղիւ թէ ցանկանայ նիհիլիստների դանակի և Նօբիլինգի հրացանի հետ համեմատել այն մարդկերանց, որոնք 16 տարի առաջ աշխատում էին բարւոքել մշակների դրութիւնը։ Ես կը խնդրեի պ. Բիսմարկից՝ որ շատ անդամ իզուր արել եմ և այս անգամ էլ նա կարող է չը կատարել իմ խնդիրքը, այդ ինձ համար մի և նոյն է (Ծիծաղ), ես կը խնդրեի պարոնից, որ նա չը փնտռէր իմ անցեալի մէջ որ և է անձնական յիմարութիւն։ Դա մեր քննած հարցի հետ ոչինչ յարաբերութիւն չունի։ Ես կարող էի աւելի վատ մարդ լինել և դարձեալ անել այն, ինչ որ անում եմ։ Չեմ կարող չը նկատել, որ անդամ Բիսմարկ իր գրուածքներով և ճառերով սոցիալ-դեմոկրատիայի հալածող է հանդիսանում, բայց երբ նա իր մտքերը իրագործում է, Բիսմարկ սոցիալ-դեմոկրատիայի բարեկամ է դառնում։ Եթէ մենք քննենք, թէ ինչպէս և ինչի համար էր նա քուէարկում անցեալ տարիներում, կը տեսնենք, որ նա միշտ այդ կողմն էր հակվում։ Նա ընդդեմ է և հալածում է սոցիալ-դեմոկրատիային, բայց երբէք հաճութիւն չէ տալիս այն միջոցներին, որոնք կարող էին այդ չարիքը արմատախիլ անել։ Այժմ ես կը ցանկանայի մէկ բան էլ յիշեցնել։ Նա մի քանի անգամ ինձ յանդիմանել է, որ ես շուտ շուտ եմ հիւանդանում և հիւանդութիւնս ինձ արգելում է կատարել իմ պարտաւորութիւնները այնպէս, ինչպէս որ ցանկալի է։ Այդ հանգամանքը ես չեմ կարող հերքել, բայց զարմանում եմ, թէ ինչպէս մի մարդ կարող է ինձ յանդիմանել հիւանդութեան համար։ Ծառայելով իմ հայրենիքին և թագաւորին ես ազնիւ ճանապարհով ստացել եմ այդ հիւանդութիւնը չափազանց շատ աշխատելուց։ Ես կը ցանկանայի, որ ինձ հետ այնպէս վարվէին, ինչպէս վերաւորված զինուորի հետ, որի հրաժարականը չեն ընդունում միայն յարգելի պատճառներից դրդված։ Ես մնում եմ պաշտօնիս մէջ կայսրի ցանկութեան համեմատ և այսպիսի հանգամանքներում չեմ կարող հրաժարական տալ։ Ես չը գիտեմ ուրիշ ինչ պատճառ կարող էր ինձ դրդել մնալ և անդադար ունենալ այն անբաւականութիւնները, որոնք անփախչելի են գործերի այսպիսի դրութեան ժամանակ (Ծիծաղ)։ Բայց մէկին յանդիմանել հիւանդութեան համար, այդ նշանակում է չը յարգել ծեր զինուորին։ Ես այսպիսի քաղաքավարութիւն չեմ էլ սպասում անդամ Բիսմարկից։ Ես միայն չեմ կամենում դարձեալ խօսել այս առարկայի մասին, եթէ պ. Բիսմարկ կրկին կը յանդիմանէ իմ բացակայութիւնը։ Անդամ Բեբելի վերաբերութեամբ ես չեմ կարծում, որ նա իր ասածի անճշդութիւնը հասկանար։ Նրան պատմել են, նա հաւատացել է և ինքն էլ կրկնում է։ Եթէ նա հնարել է ճշմարտութեան և ստութեան այն ժողովածուն, որ ես հրամայեցի ընտրել ինձ համար երէկվայ նիստի հաշուից, ուրեմն նա այնքան տաղանդուն, որ կարող է «Times»-ի կամ մի ուրիշ մեծ լրագրի թղթակից դառնալ (Ծիծաղ) և ես պատրաստ եմ նրան խորհուրդ տալ ընտրել այդ շահաւէտ պարապմունքը։ Անդամ Բեբել սկսում է իր պատմական առասպելը զանազան մանրամասնութիւններով, կարծես նրանց հաստատ յիշում է և տեղ տեղ չակերտների մէջ է դնում իմ խօսքերը, միայն այդ չակերտները նա շատ տարաժամ է դնում։ «1862 թ. սեպտեմբերին, կիրակի օրը, պրուսական կառավարութեան և իշխան Բիսմարկի յանձնարարութեամբ ներկայացաւ մեր մանաժողովին մի պարոն Էյխլեր անունով։ Մինչդեռ մեզանից ամենածերերը յիշում են, որ ես ընդունեցի մինիստրի պաշտօնը 1862 թ. սեպտեմբերի 23-ին, այսինքն այն ամսվայ վերջին շաբաթում, երբ ես իբր թէ Էյխլերին յանձնարարութիւն եմ տուել։ Ես այն ժամանակ նոր վերադարձայ արտասահմանից երկար բացակայութենից յետոյ, որի ընթացքում չէի պարապել ներքին քաղաքականութեամբ և նոյնքան անյայտ մարդ էի, որքան և Էյխլեր։ Ես այն ժամանակ այդ մարդու գոյութեան մասին ոչինչ չը գիտէի և յանկարծ դուրս է գալիս, որ 1862 սեպտեմբերին ես մի յանձնարարութիւն եմ տուել Էյխլերին, այսինքն այն ժամանակ, երբ ես չափազանց շատ զբաղված էի, երբ դիպլոմատիական հանդիստ կեանքը փոխել էի մինիստրի անհանգիստ պարապմունքների հետ, երբ ես անդադար ընկերներ էի փնտռում, երբ ամեն օր պատերազմում էի գերմանական ժողովի մէջ, երբ անդադար պէտք է այցելէի բազմաթիւ մանաժողովները և այլն։ Եթէ կամենում են հաւատալ Էյխլերի նման մարդկերանց, երբ նոքա պարծենում են իրանց ծանօթութիւններով, ուրեմն այս դէպքում բոլորը հաստատված ստութիւն է, որ պարոն Բեբել այստեղ մեծ զգուշութեամբ պէտք է կրկնէր։ Ես լաւ յիշում եմ Էյխլերին, որովհետև նա մի ժամանակ ինձ մի քանի պահանջներ ներկայացրեց այն ծառայութիւնների համար, որոնք ինձ չէր արել։ (Անդամ Բեբել. Ա՜հ)։ Այո, ա՜հ։ Եթէ ինձ ընդհատող հռետորը գիտէ ում համար են արած այդ ծառայութիւնները, թող ասէ։ Ինձ համար Էյխլեր ոչինչ չէ արել։ Ցաւում եմ որ այսպիսի ընդհատողները անյայտ են մնում։»

(Կը շարունակվի)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Վիեննա, 17/29 սեպտեմբերի։ Այսօր երկար ռմբակոծութենից յետոյ աւստրիական զօրքերը գրաւեցին Կլօբուկ ամրոցը, որ Հերցեգովինայի ապստամբների վերջին ապաստանն էր։ Իսկոյն սկսել են ամրացած դիրքերի քանդելը։ Զառիվայրների վրա վերցրած է պատերազմական շատ պաշարներ։

Վիեննա, 18/30 սեպտեմբերի։ «Polit. Corresp.» հաղորդում է, որ բրիտանական նաւատորմը հեռացել է Արտակայից։ Սուլթանը ուղարկեց Օսմանփաշային Լայարդի մօտ շնորհակալութիւն յայտնելու համար բրիտանական նաւատորմի հեռանալու պատճառով։

Օդեսա, 19 սեպտեմբերի։ Այսօր օրհնեցին «Նիժնի-Նովգորոդ» կրէյսերը Արկասի ներկայութեամբ։

Լոնդոն, 19 սեպտեմբերի (1 հոկտեմբերի)։ Բրիտանական կաբինետը վճռեց տալ Հնդկաստանի կառավարութեանը գործողութիւնների կատարեալ ազատութիւն Աֆգանիստանի վերաբերութեամբ։ Մի բատալիոն և հինգ թնդանօթներ հրաման ստացան ուղեւորվել Հնդկաստան։

Ս. Պետերբուրգ, 20 սեպտեմբերի։ Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 96 ր. 75 կ., երկրորդ 96 ր. 50 կ., երրորդ 95 ր. 75 կ., չորրորդ 95 ր. 75 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 231 ր. 50 կ., երկրորդ 227 ր. 50 կ., արևելեան 92 ր. 50 կ., ոսկի 8 ր. 14 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ $24^1/_{16}$ պէնս, ռուսաց 100 ռուբլ Գերմանիայի վրա արժէ 205 մարկ, Փարիզի վրա 251 ֆրանկ։ Տրամադրութիւնը թոյլ է։

---

*) Այս վերնագրով մի նամակ կար տպված «Times» լրագրի մէջ։

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ «Թուաբանական խնդիրների ժողովածու», գրաւոր վարժութիւն տարրական ուսումնարանների համար I մասն. աշխատասիրութիւն Զախարովի և Պաուլսօնի եղանակով. Թարգմանեաց Միրիմանեանց։

Ծախվում է Զ. Գրիգորեանցի գրախանութում։

МЕЗАФОСЕЛЕНЪ АПРАНЕРНЕРИ МАГАЗИНЪ ТОМАСА ХАНДАМИРОВА (նախկին ԽԱԼԱԹՕՎԻ) տեղափոխված է Վելիամինովկայա փողոցի վրա գտնվող Խոսրոևի տանից Երևանեան հրապարակի վրա ԽԱՐԱԶՕՎԻ տանը, Թիֆլիսի փոխադարձ կրեդիտի ընկերութեան չինութեան տակ։ Ցայտնելով սրա մասին Թիֆլիսի հասարակութեան, մեծայոյս եմ որ նա իր այցելութիւնները չի պակասեցնի իմ մագազինից, հաւատացած լինելով, որ ինձանից դուրս եկած ապրանքները լաւ յատկութիւններ ունեն և գները չատ չափաւոր են։

1—6

МАГАЗИНЪ шелковыхъ товаровъ ТОМАСА ХАНДАМИРОВА (бывшій ХАЛАТОВА) перемѣщенъ съ Вельяминовской улицы дома Хосроева на Эриванскую площадь въ домъ ХАРАЗОВА, подъ Тифлисскимъ обществомъ взаимнаго кредита. Объявляя о семъ Тифлисской публикѣ льщу себя надеждою, что она не оставитъ своимъ посѣщеніемъ мой магазинъ съ тою увѣренностью, что отпускаемые мною товары будутъ доброкачественные и цѣны самыя умѣренныя.—

1—6

Իգդիրու ուսումնարանին հարկաւոր է մի ուսուցիչ ռուսերէն լեզուի և թուաբանութեան։—Ցանկացողները կարող են շուտով իրանց պայմանները յայտնել ուսումնարանի հոգաբարձուներին հետևեալ հասէով։—Въ Игдыръ попечительству Армянскаго Духовнаго (или Вартановскаго) училища.

4—4

ԶԱՔԱՐԻԱ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ

Գրավաճառանոցը ստացել է «ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄԼՈՑ» մայիս և յունիս ամիսների առանձին—առանձին համարները, որոնք արդէն ուղարկված են բաժանորդներին. օրերումն կը ստանամ յուլիս ամսուայ №—ը. նոյնպէս նամակաւ հաղորդեցին, որ օգոստոսի №—ն էլ ուղարկելու են շուտով։ Հրաւիրում ենք ցանկացողներին ուղարկել 8 ռուբլի և ստանալ այդ օգտակար ամսագիրը։

3—5

Դուրս եկաւ մամուլի տակից և վաճառվում է «Կովկաս. գրավաճ. Զաք. Գրիգորեանցի»

1. Պոլուիմպերիալ—կատակերգութիւն, երկու արարուածով (մանկական թատրոն. թարգմ. Ց. Նազարեանց. տպագրութիւն Զ. Գրիգորեան. Գինն է 20 կոպէկ։

2. Նախապաշարմունք—I հատոր. աշխատասիրութիւն Ց. Նազարեանց։ Գինն է 50 կոպէկ։

—

Շուտով դուրս կը գայ մամուլի տակից։

1. Ղուկասեանց—ընթերցարան. երր. տպագ. Գինն է 40 կոպէկ։

ԹԻՖԼԻՍԻ Ս. ԳԱՅԱՆԵԱՆ հայ օրիորդաց միջնակարգ ուսումնարանը բացվել է օգոստոսի 15-ին և այդ օրից սկսված ընդունվում են նոր աշակերտուհիներ։

Տեսուչ Ա. Յովհաննիսեանց

3—3

Ներսիսեան Հայոց Ազգային-Հոգևոր դպրոցի հոգաբարձութիւնը հրաւիրում է ցանկացողներին յանձն առնել տալ դպրոցի որդեգիրներին կոշիկներ։ Այս մասին նշանակած է աճուրդ (առանց կրկնաճրդի) հոգաբարձական խորհրդարանում սեպտ. ամսիս 27-ին, երեկոյեան 8 ժամին։ Պայմանների մասին կարելի է տեղեկանալ դպրոցի դիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակէից և տօներից, ցերեկվայ 10-ից մինչև 12 ժամն։

Продается тарантасъ и мебель въ домѣ Теранова № 24 спросить человѣка Щербакова отъ 10 ч. утра и 5 ч. вечера.

ՔԱՐԱԾՈՒԽ „ՌՈՒՍԱՍՏԱՆ“ ՀԱԼԽՏԻՑ

(ՀԱՆՔԻՑ), ՈՐ ԳՏՆՎՈՒՄ Է ԶԷԼՕԲԱՆԻ ԱՐՈՒԱՐՁԱՆԻ ԿՈՒՐՍԷԲԱ ԳԻՒՂՈՒՄ

ԸՆԿ. ՆԷՅՄԱՆ—ՀԷՆԻՆԳ

Ծախվում է ՇԷՆԻՆԳԻ ՊԱՎԻԼԻՕՆՈՒՄ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՍԻՆ ԱՄԲՈՂՋ ՎԱԳՕՆՆԵՐՈՎ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒԴԸ 25 ԿՕՊ., ԻՍԿ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ ՔԱՂԱՔԻ ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՕՊԷԿՈՎ։

---

1. Ն. Տէր-Ղևոնդեանի Մայրենի լեզուի առաջին տարին վեցերորդ տպագրութեամբ, բազմաթիւ պատկերներով զարդարված և նորանոր տասցուածներով, առածներով, հանելուկներով և յօդուածներով լրացրած։ Գինն է 35 կոպէկ։ Գումարով առնողներին զեղջուն կը լինի։

2. Մայրենի լեզուի երկրորդ տարին չորրորդ տպագրութիւն, նոյնպէս նորանոր պատկերներով զարդարած և մասնաւոր փոփոխութիւններով լրացրած։ Գինն է 40 կոպ.։ Գումարով առնողներին զեղջուն կը լինի։

Ծանօթութիւն. Վերոյիշեալ գրքերը ընդունված են Թիֆլիսի թեմի պ. թեմ. վերատեսչից իբրև սկզբնական դասագիրք հայոց լեզուի՝ իր ձեռքի տակ եղած բոլոր ուսումնարաններում։ Սոքա ընդունված են նոյնպէս Կովկասի հայոց ուսումնարաններից գրեթէ ամենում, նմանապէս և միւս թեմերի ուսումնարաններից շատերում։ Վաճառվում են բացառապէս կենտրոնական գրավաճառանոցում։ Մայրենի լեզուի գ. և դ. տարին պատրաստ կը լինի մինչև սեպտեմբերի 10-ը։

Մամուլի տակից դուրս եկաւ և ծախվում է Ս. Մանդինեանի հետևեալ աշխատութիւնները.

1) Նահապետական և հայրենի աշխարհ, երրորդ տարվայ ուսմունք և ընթերցմունք. գինն է 65 կ.։

2) Համառօտ մանկավարժութիւն. գինն է 1 ր. 50 կ.։

4—6

Մի երիտասարդ կամենում է Թիֆլիսում դասեր տալ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻՑ, ՀԱՅՈՑ պատմութենից և ուրիշ լեզուներից (ռուսերէն և գաղղերէն) և առարկաներից։ Ցօժար է բընակվել ընտանեաց մէջ։ Պայմանները կարելի է իմանալ «Մշակի» խմբագրատան և Տէր-Յովհաննիսեանի կանդիտերսկում։

2—3

Մի բարձր դասատան գիմնազիստ որոնում է բեպետիտորի տեղ ընտանիքում։ Հասցէն թողնել «Մշակի» խմբագրատանը։

2—3

Լոյս տեսաւ

«ՆԱԽՕՊՀՐՄՈՒՆՔ»

Անունով մեր աշխատասիրութեան I հատորը, որ պարունակում է իր մէջ մեր կեանքից առնված 600-ից աւելի նախապաշարումներ։—Գինն է 50 կ.։

Կարելի է ստանալ հետևեալ հասցէով.—«Въ Тифлисъ.—Кавказская книжная торговля З. П. Грикурова.»

Ց. Նազարեանց

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21. ՏԵՂԵԿԱՑՈՑՑ ԹԻՖԼԻՍ. 1878.

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ (Սեպտեմբերի 20-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պոլուիմպերիալը)	8	15
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1540	—
Հին 20 կ. 72 պր. 1000 „	1240	—
Վիգրիշնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 »	235	—
Երկրորդ 5% վիգրիշնի »	233	—
Մարսելի կուրսը 256—	100	—
Լոնդոնի կուրսը Օդեսայի վրա.	9	70
Վենայի կուրսը ածէ 121 գլ.	100	—
Դաւրեժի բարաթը. . .	5	45
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . . .	315	—
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	102	—
Շաքարը բրօցկու . .	7	50
„ միւս տեսակը.	7	40
„ չաքարաւազը .	6	20
„ տրանզիտը. .	6	—
„ մաքսը վճարած	11	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. . .	8	—
Միւս տեսակը հին սերմից.	7	20
Բուրդը թուշի . . .	7	30
„ թարաքամի .	4	—
Ալիւր Շորագալու . .	1	80
„ Երևանի.	—	—
Գարին.	1	30
Մոմը բնաճարպի (стеар.)	12	30
Մետաքս Նուխվայ. .	200	—
Կախեթունը. . . .	120	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	47	—
Ֆրիզոնը (լաստ) Ագուլեաց	55	—
Կոֆէն մօկօի. . . .	26	—
„ Լիվանի . . .	18	—
„ մարտինկօյինը	16	—

ՀԵՌԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա .	3	
Անգլիա. . . .	4	
Գերմանիա. . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ

(Վէրայի վրա № 38)

Մանդկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվարձ։ Առանձին սենեակներում ամիսը 30—50 ռուբլ։ Կանանց հիւանդութիւնների բաժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 ռուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 ռուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Անանով։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլօվօ (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ։

	առաւ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլօվօ.	1. 29	11. 57
Ռիոն . . .	6. 47	
Փօթի . .	9. 40	
	առաւ.	
Փօթիից . .	9. 13	
Ռիոն . . .	12. 13	
Միխայլօվօ. .	5. 39	1 37
Գօրի. . . .	7. 5	4. [illegible]
Թիֆլիս. . .	9. 31	7. 56

Թիֆլիս գալիս է առաջին գընացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . ,	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2. 18
Ռիոն. . .	9.	6. 75	3. 75
Փօթի .	13. [illegible]	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ, թէ լրագիրներ և թէ ծանր փօստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փօստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բագուի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից՝ չորեքշաբթի և կիրակի։ Բելիկլիսի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿ ԵՎ

	Կոպ.
Բաց նամակը արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . . .	8
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը 8-ից մինչև 10 ժամը յունիսի 1-ց մինչև սեպտեմբերի 1-ը։

Երկուշաբթի. Վէրմիշէվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Քուչարեանց վիրաբուժական և կանանց հիւանդութիւններ 10-ից մինչև 11 ժամ։

Երեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Բակտ վենէրական և կաշու հ., Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան. Պէուսնով աչքի հ.։

Չորեքշաբթի. Վէրմիշէվ ներքին հ., Բակտ կրծքային և ջղային հ.։

Հինգշաբթի. Վէրմիշէվ ներքին հ. Բակտ կրծքային հ. Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների 10—11 ժամ, կ. Բախուտով կանանց և ջղային հ.։

Ուրբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Ա. Բախուտով կանանց և երեխաների հ. և մանկաբարձութեան։

Շաբաթ. Վէրմիշէվ ներքին հ. Բակտ կրծքային և ջղային հ. Պէուսնով աչքի հիւանդութիւններ։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

—ԵՐԵՒԱՆ. Շ. Ստացանք յիշողութիւնները։ Հարկաւոր կարգադրութիւնը կանենք։ Ձեր համակրութեան համար շնորհակալ ենք։

—ԹԻՖԼԻՍ. Հ. Ա. «Times» լրագրից թարգմանած նամակը տպեցինք ներկայ համարում։ Միւս յօդուածները դեռ չենք կարդացել։

—ԳԱՆՁԱԿ. Ց. Շուտով կը տպենք նամակը թեմական տեսչի կարգադրութեան մասին։

—ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍ. Գողթնեցի. Նամակը չենք տպի, որ այդպիսի չնչին անցքի համար կրքեր չը բարձրանան։ Պարոնը բաւական պատժվեց։ Եթէ միւս անգամ նոյնպէս կը վարվի, այն ժամանակ մանրամասն կը տըպենք։

—ԴԱՒՐԷԺ. Տեղացի. Նամակը տպագրութեան համար անյարմար է։

Дозволено Цензурою 20 Сентября 1878 г. Тифлисъ Типографія Мартиросіанца Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ